ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 5626-Ա « 18 » նոյեմբերի 2026թ.

ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ ՀԱՂԹԱՆԱԿ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՆԳՈՒՅՑԻՆ ԿԻՑ ՏԱՐԱԾՔ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ, ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ՄՆԱՑՈՐԴԱՅԻՆ ՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Գեղամ Բրտոտյանի դիմումը՝ Հաղթանակ արդյունաբերական հանգույցին կից տարածք հասցեում գտնվող, վարձակալության իրավունքով իրեն տրամադրված հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարելու և մնացորդային մասի նկատմամբ վարձակալության իրավունքը դադարեցնելու մասին:

Հարցի քննարկման համար հիմք են հանդիսացել անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.03082023-01-0227 վկայականը, վարձակալության իրավունքը մասնակի դադարեցնելու վերաբերյալ Գեղամ Բրտոտյանի համաձայնությունը:

Երևան քաղաքի ավագանու 10.09.2024թ. հ.204-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծի համաձայն՝ քննարկող 11.04762հա հողամասից 10.5806հա մակերեսով հողամասը գտնվում է բնակավայրերի նպատակային նշանակության խառը կառուցապատման հողերի գոտում և ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում, իսկ 0.46702հա հատվածը ներառված է համայնքային նշանակության մայրուղային փողոցների ցանցում և ընդգրկված է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում: Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N.1023-Ն որոշմամբ հաստատված հավելվածների համաձայն՝ ըստ տարածագնահատման համաձայնեցված սխեմայի քննարկվող հողամասը գտնվում է 12-րդ գոտում (ծածկագիր՝ 01-007-0170-0030, ծածկագիրը ներառված է Երևան քաղաքի ավագանու 04.11.2012թ. հ.422-Ն որոշման մեջ, տող՝ 2651):

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 37-րդ, 42-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ կետով, 59-րդ, 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի

466-րդ հոդվածի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշմամբ, Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի հ.463-Ն որոշման հավելվածով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության Դ-114897-26 եզրակացությունը.

1. Սահմանել, որ համայնքային սեփականություն հանդիսացող, Հաղթանակ արդյունաբերական հանգույցին կից տարածք հասցեում գտնվող հողամասի մակերեսը կազմում է 10.5806հա, որի սահմանները որոշվում են սահմանված կարգով հաստատված հատակագծով:

2. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասին տրամադրել «Հաղթանակ թաղամաս 2-րդ փողոց հ.78» հասցեն:

3. Երևան քաղաքի ավագանու 10.09.2024թ. հ.204-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծի համաձայն՝ Հաղթանակ արդյունաբերական հանգույցին կից տարածք հասցեում գտնվող 10.5806հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը (կատեգորիան) սահմանել բնակավայրերի, իսկ գործառնական նշանակությունը (օգտագործման նպատակը)՝ խառը կառուցապատման:

4. Հաղթանակ արդյունաբերական հանգույցին կից տարածքի նկատմամբ Երևան համայնքի սեփականության իրավունքը գրանցելուց հետո, 10.5806հա մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարել Գեղամ Բրտոտյանին, տարածագնահատման 12-րդ գոտու շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքով, որը կազմում է 305,567,728 (երեք հարյուր հինգ միլիոն հինգ հարյուր վաթսունյոթ հազար յոթ հարյուր քսանութ) ՀՀ դրամ և գումարը փոխանցել Երևանի քաղաքապետարանի 900015211320 հաշվեհամարին (հողի օտարումից եկամուտներ:

5. Լիազորել՝

1) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետին՝ Գեղամ Բրտոտյանի կողմից Երևանի քաղաքապետարան առուվաճառքի պայմանագիր կնքելու վերաբերյալ դիմումի, հողամասի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքի և պայմանագրի նախապատրաստման համար տեղական վճարը հավաստող փաստաթղթերի, ինչպես նաև միասնական տեղեկանքը ներկայացնելուց հետո Երևանի քաղաքապետի անունից կնքել ուղղակի վաճառքի մասին պայմանագիր.

2) Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավար Սաշա Կատվալյանին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով, Երևանի քաղաքապետի անունից Գեղամ Բրտոտյանի հետ կնքել համաձայնագիր՝ 28.04.2005 թվականին կնքված հողամասի վարձակալության հ.1178 պայմանագիրը՝ 0.46702հա մակերեսի չափով լուծելու մասին:

6. Սահմանել, որ սույն որոշման ընդունման պահից հողամասի կադաստրային արժեքը հողամասը ձեռք բերողի կողմից 15-օրյա ժամկետում չվճարելու դեպքում՝ որոշման 4-րդ կետը համարվում է ուժը կորցրած:

7. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչությանը՝ սույն որոշման հիման վրա տրամադրված անշարժ գույքի հասցեի վերաբերյալ տեղեկատվությունը 3 աշխատանքային օրվա ընթացքում առաքել ՀՀ կադաստրի կոմիտեի Երևանի տարածքային ու ՀՀ ներքին գործերի նախարարության համապատասխան ստորաբաժանմանը, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարին:

8. Ընդունել ի գիտություն, որ ուղղակի վաճառքի մասին պայմանագրից և պայմանագիրը լուծելու մասին համաձայնագրից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

9. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

10. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության, անշարժ գույքի կառավարման վարչությունների պետերի ու Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի վրա:

11.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ